**«Փինք» իրավապաշտպան ՀԿ**

**Կազմակերպության ծրագրերն ու հիմնական միջոցառումները**

**Ի լրումն կազմակերպության ներկայացված փորձի**

- 2021թ-ին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի հետ համագործակցությամբ, PAHCT և TAHCLE ծրագրերի շրջանակներում «Փինք»-ի փորձագետի կողմից իրականացվել էր ոստիկանական բարեփոխումների ծրագրի և ատելության հիմքով հանցագործությունների քննության պրակտիկայի ու օրենսդրական կարգավորումների հետազոտությունը, ինչը ներառել է նաև ոստիկանության բարձրաստիճան ծառայողների և քաղաքականություն մշակողների հետ հարցազրույցներ: Հետազոտությունը հիմք էլ ծառայել իրավակիրառ մարմինների համար ատելության հիմքով հանցագործությունների քննության վերաբերյալ դասընթացների մոդուլի մշակման և դասընթացի անցկացման համար: Նշենք նաև որ այս ծրագրերը իրականացվել են ԺՀՄԻԳ-ի, ՀՀ Արդարադատության նախարարության, Դատախազության, Քննչական կոմիտեի, Արդարադատության Ակադեմիայի, Ոստիկանական կրթահամալիրի միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրի հիման վրա:
- «Փինք»-ը մաս է կազմել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից իրականացվող իրավակիրառ մարմինների համար անցկացվող դասընթացներին և իր փորձագետների միջոցով վարել է դասընթացներ ոստիկանության ծառայողների համար՝ ատելության հիմքով հանցագործությունների նույնականացման, որակման, արձանագրման, ինչպես նաև տուժողների հետ զգայուն աշխատանքի վերաբերյալ: 2022 թ. հունվարի 18-ից փետրվարի 11-ը «Փինք»-ը ներգրավված է եղել ոստիկանների համար անցկացվող դասընթացների կազմակերպման գործընթացում: Այն ներառել է դասընթացի մոդուլի համատեղ մշակումն ու եռօրյա դասընթացի վարումը Ոստիկանական կրթահամալիրում՝ TAHCLE ծրագրի շրջանակում:
- • Բոլոր տարիներին, այդ թվում նաև 2025 թ.-ին, կլոր սեղան քննարկումներին ոստիկանությանը ուղարկվել են հրավերներ, և միջոցառումների ընթացքում ներկայացվել են կազմակերպության կողմից արձանագրված խնդիրներն ու առաջարկները:
- 2024 թ.-ին ոստիկանությանը ներկայացվել են ոստիկանությունում կանանց հեղինակության բարձրացմանը, ինչպես նաև խոչընդոտների բացահայտմանն ու հասցեավորմանն ուղղված առաջարկներ՝ «Ոստիկանության մեջ կանայք» համաժողովի շրջանակում.
- 2025 թ նոյեմբերի 8-9-ը կազմակերպության փորձագետների մասնակցությամբ իրականցվել է վերապատրաստում իրավապահ մարմինների համար՝ ատելության հիմքով հանցագործությունների բացահայտման և քննության վերաբերյալ. Եվրոպայի խորհրդի կողմից կազմակերպված երկօրյա դասընթացը միավորեց Հայաստանի ոստիկանության աշխատակիցներին, դատախազներին և քննիչներին՝ ատելության հիմքով հանցագործությունները բացահայտելու և քննելու նրանց կարողությունները հզորացնելու համար: Իրավապահ մարմինների համար նախատեսված ծրագիրը նպատակ ուներ բարելավել ատելության հիմքով միջադեպերի վերաբերյալ նրանց

ըմբռնումը և նրանց զինել պրակտիկ գործիքներով՝ բոլոր անհատների համար արդարադատություն և պաշտպանություն ապահովելու համար: Դասընթացի ընթացքում մասնակիցներն ավելի խորը գիտելիքներ ձեռք բերեցին նման հանցագործությունների ճանաչման, ավելի արդյունավետ հետաքննություններ անցկացնելու և Եվրոպայի խորհրդի հիմնական չափանիշների, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան նախադեպային իրավունքի կիրառման վերաբերյալ: Փինք ՀԿ-ի մասնագետները նույնպես հրավիրվել էին կիսվելու ԼԳԲՏ+ անձանց հետ աշխատելու զգայունության և լավագույն փորձի վերաբերյալ իրենց մտքերով՝ քննարկումներին նպաստելով քաղաքացիական հասարակության արժեքավոր տեսանկյուններով: Միջոցառումը ոչ միայն բարելավեց մասնագիտական հմտությունները, այլև խրախուսեց իրավապահ մարմինների և քաղաքացիական հասարակության միջև համագործակցությունն ու երկխոսությունը: Այն նաև ընդգծեց ատելության հիմքով հանցագործությունների տարածվածությունը Հայաստանում և դրանց զգալի ազդեցությունը տուժողների և համայնքի վրա:

- Կազմակերպության կողմից ոստիկանության հետ համագործակցությունը հաճախ տեղի է ունենում այլ միավորումների կազմում, ինչպես օրինակ՝ «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան»: Մասնավորապես, աշխատանքներ են տարվել ընտանեկան բռնության դեմ միջոցառումների, ներառյալ՝ օրենսդրական կարգավորումների մշակման ուղղությամբ, ինչի արդյունքում ի թիվս այլոց օրենքով ստեղծվել է հնարավորություն ընտանեկան բռնությունից պաշտպանություն տրամադրել նաև զուգընկերային բռնությունից տուժած ԼԳԲՏ+ անձանց:

Հարգանքով՝
Կարինե Ղազարյան
Փինք ՀԿ-ի նախագահ